
ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱԲՈՒ ԵՎ ԱՅԼԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ: ԹԱԼԻՇԵՐԵՆԻ ԱՆԲԱՐԱՆԻ ԲԱՐԲԱՆԻ ԲԱՐԲԱՆՈՇԱՐՈՒՄ «ԳԱՅԼ» ԵՎ «ՕԶ» ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՐ ԱՎԶՅԱՆ

Կասպից ծովի հարավարևմտյան ափին՝ հարավ-արևելքից մինչև հյուսիս, մոտ 150 կմ ձգվող՝ տարածության վրա բնակվող թալիշների լեզվի ուսումնասիրության պատմությունը սկիզբ է առնում XIX դարի առաջին կեսերին, երբ Լոնդոնում 1842թ. լույս է տեսնում ռուս իրանագետ Ալ. Խոճկոյի “Specimens of the popular poetry of Persia” աշխատությունը, որտեղ մերձկասպյան լեզուներից գիլաներենի և մազանդարաներենի հետ մեկտեղ ներառված էին նաև թալիշերեն երգիկներ²: Հետագայում թալիշերենի ուսումնասիրությամբ են զբաղվում նաև ռուս արևելագետներ Ի. Բերեզինը, Բ. Դորնը, լեզվաբան Պ. Ռիսսը, գերմանացի իրանագետ Վ. Գեյզերը, իրանցի լեզվաբան Է. Յարշաթերը, ֆրանսիացի իրանագետ և լեզվաբան Ժ. Լազարը, Վ. Սոկոլովան և այլն: Այնուամենայնիվ, թալիշերենի ուսումնասիրման զարգացման մեջ ամենից կարևոր ու մեծ դեր է խաղում ռուս ականավոր արևելագետ Բորիս Միլլերը, ով 1930թ. հրատարակում է իր «Թալիշական տեքստեր» («Талышские тексты») գիրքը, ապա 1953թ. երկար տարիների տքնաջան աշխատանքից հետո լույս է տեսնում նրա՝ մինչ օրս թալիշերենի վերաբերյալ ամենաիմնարար աշխատություն համարվող «Թալիշերեն» («Талышский язык») գիրքը: Բ. Միլլերի գործը շարունակում է նրա աշակերտուհի Լ. Պիրեյկոն, ով այս լեզվի վերաբերյալ մի քանի գրքերի ու հոդվածների հեղինակ է, այդ թվում՝ թալիշերենի առաջին բառարանի՝ «Թալիշերեն-ռուսերեն բառարան», որը Մոսկվայում հրատարակվում է 1976թ.:

¹ **Asatrian G., Borjian H.**, Talysh and the Talyshis (The state of research), “Iran and the Caucasus” 9.1, Brill, Leiden, 2005, p. 43.

² **Миллер Б.**, Талышский язык, Москва, 1953, с. 13.

Հյուսիսարևմտաիրանական լեզվախմբի մեջ մտնող թալիշերենը մի շարք հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային հատկանիշների հիման վրա սովորաբար բաժանվում է երեք բարբառախմբի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Թալիշերենի Անբարանի բարբառը մտնում է հյուսիսային բարբառախմբի մեջ. այն տարածված է Իրանի Արդաբիլ նահանգի Նամին վարչաշրջանի Անբարան շրջանում, հյուսիսային թալիշերենի ամենահարավային բարբառն է և սահմանակցում է թալիշերենի կենտրոնական բարբառախմբի հետ:

Այս հոդվածի նպատակը թալիշերենի Անբարանի բարբառի՝ լեզվին նվիրված նախորդ ուսումնասիրություններում դեռևս չքննարկված «գայլ» և «օձ» հասկացություններն արտահայտող բառերի ստուգաբանական քննությունն է:

1. neči, vāg

«Գայլ» հասկացության համար թալիշերենում գոյություն ունի երկու բառ՝ vāg և neči: Անկասկած սրանցից vāg ձևի մեջ պետք է տեսնել «գայլ» նշանակությամբ հնդեվրոպական հնագույն բառոյթներից մեկը՝ *wlk^{[h]o-3} «գայլ», որից ծագում է հին իրանական *vrka- նախածնը⁴ (հմմտ. ավ. vāhrka-⁵): Սա հեշտությամբ ապացուցվում է թալիշերենին հատուկ հնչյունաբանական օրենքներով. բնիկ թալիշական բառերում բառասկզբի v շրթնատամային շփական ձայնեղ բաղաձայնը շարունակում է հին իրանական *v-ն (voa «ծյուն» < հին իր. *vafra-, vo «քամի» < հին իր. *vāta, vəl «ծաղիկ» < հին իր. *varda-)⁶: Ձայնեղ պայթական հետնալեզվային g բաղաձայնը բառամիջյան կամ բառավերջյան դիրքում հաճախ է հանգում հին իրանական *k-ին (igla (= ig + la) «մի, ինչ-որ» < հին իր. *aivaka-, kāg «հավ» < հին իր. *karka-, māg «մահ» < հին իր. *marka- և այլն): Թալիշերենի բաղաձայնային համակարգի առանձնահատկություններով են բացատրվում նաև vāg բառում հին իրանական *r ձայնորդի զարգացումը *-r-ի և հետագա կորուստը. թալիշերենում այս ձայնորդն առանձնանում է իր խիստ անկայուն կարգավիճակով բառամիջում և բառավերջում. հին

³ Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 492.

⁴ Пирейко Л., Основы иранского языкознания, новоиранские языки: северо-западная группа, т. 1, с. 107.

⁵ Bartholomae Ch., Altiranisches wörterbuch, Strassburg, 1904, pp. 1418-1419.

⁶ Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որտեղ բառասկզբի հին իրանական *v-ն տալիս է b կամ g՝ gorg«գայլ», barf«ծյուն», bād«քամի», gol«ծաղիկ»:

իրանական գրեթե բոլոր այն արմատներում, որտեղ *r* ձայնորդը հանդես չի գալիս *-rd < *rt*, *-rz < *rz* հնչյունախմբերում, պատմական զարգացման ընթացքում այն սղվում է (*gām* «տաք» < հին իր. **garma-*, *nām* «փափուկ» < հին իր. **narma-*, բայց *pārd* «կամուրջ» < հին իր. *prtu-7*, *sor*⁸ «տարի» < հին իր. **sard-*), ընդ որում պետք է նշել, որ *r* ձայնորդից առաջ կարճ *a* ձայնավորը թալիշերենում դառնում է երկար *ā*, անկախ այն հանգամանքից՝ պահպանվո՞ւմ է այն, թե՛ ընկնում, ինչը կարելի է նկատել վերոբերյալ բոլոր օրինակներում: Ինչ վերաբերում է հին իրանական **vrka-* նախաձևի բառավերջի ձայնավորին, ապա այն բառից անհետացած պետք է լինի դեռևս հին իրանական լեզվադարաշրջանից միջին իրանական լեզվադարաշրջան անցման ժամանակ, երբ, պայմանավորված հին իրանական ուժային շեշտի օրենքով⁹, բառավերջի շեշտագույրկ վանկերը թուլանում էին և ընկնում: Ամփոփելով վերոբերյալ հանգամանքները՝ թալիշերենի Անբարանի բարբառի *vāg* «գայլ» բառի համար կարելի է ենթադրել պատմական զարգացման հետևյալ շղթան՝ **vrka-* > **varka-* > **vark-* > **vārg-* > *vāg*:

Հնդեվրոպական ավանդության մեջ գայլը պաշտամունքային-ծիսակարգային գործառույթներ ունեցող, ծիսական հատկանիշներով օժտված կենդանի է, և, այդ հանգամանքով պայմանավորված, հետագայում մի շարք հնդեվրոպական լեզուներում «գայլ» հասկացության արտահայտման համար առաջնային արմատների կողքին դրանց տաբուավորման հետևանքով ի հայտ են գալիս նոր, երբեմն էվֆեմիստական (այլասացական) բառեր և բառակապակցություններ, ինչպես, օրինակ, լատիշերենում՝ *dievas uns* և *meža suns*, որ բառացիորեն նշանակում են համապատասխանաբար «Աստծո շուն» և «անտառի շուն»¹⁰: Իրանական դիցաբանության մեջ ևս գայլն առանձնահատուկ տեղ է գրավում. զրադաշտականության մեջ գայլերը համարվում են դիվային արարածներ¹¹, և անգամ զրադաշտական տիեզերածնության միջին պարսկական «Բունդահիշն» երկի ամբողջ 23-րդ գլուխը նվիրված է գայլերին¹²: Բնական է,

⁷ Пирейко Л., նշվ. աշխ., էջ 118:

⁸ Sor «տարի» բառը հետաքրքիր օրինակ է, որտեղ *-rd-* ձայնախմբում *r* ձայնորդը պահպանվել է, բայց ընկել է առաջնալեզվային ձայնեղ պայթական *d* բաղաձայնը:

⁹ Оранский И., Введение в иранскую филологию, М., «Наука» ГРБЛ, 1988, с. 144-145.

¹⁰ Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 494:

¹¹ Boyce M., A history of Zoroastrianism, Volume One, The early period, Leiden/Köln, 1975, p. 259.

¹² Anklesaria E. T. D., Anklesaria B. T., The Bundahishn, Bombay 1908, p. XXV.

որ նման հատկանիշներով օժտված կենդանու անվանումը ժամանակի ընթացքում տաբուավորվում է նաև մի շարք իրանական ժողովուրդների մոտ, մանավանդ որ այս ժողովուրդների հիմնական զբաղմունքը դարեր ի վեր եղել է անասնապահությունը: Այսպես, Տաջիկստանի Սամարղանդի, Բուխարայի և Սուրխանդարյայի շրջաններում լեռնային տաջիկների լեզվում *gurg* «գայլ» բառի փոխարեն կիրառվում է *jondor* «կենդանի էակ, արարած, շնչավոր» բառը¹³, իսկ գիլաներենում *gurg* «գայլ» բառի հետ միասին գործածական է նաև *jānavār* էվֆեմիզմը, որ նշանակում է «կենդանի, անասուն, գազան»: Ահա և թալիշերենի Անբարանի բարբառում այսօր *vāg* բառն ունի խիստ հազվադեպ կիրառություն, և դրա փոխարեն «գայլ» բառի իմաստով կիրառվում է *neči* բառը, որը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի *naxčir/naxjir*, միջին պարսկերենի *naxčir* «որս, որսամիս», ինչպես նաև հայերենի՝ պահլավերենից փոխառյալ «նախճիր» բառերին, որոնք, ըստ Բեյլիի, ծագում են հին իրանական **naxti-čīθra*- «գիշերը առաջացած, ստեղծված» (*originating in night*) ձևից¹⁴: Էդելմանն այս բառը հանգեցնում է իմաստաբանական տեսակետի ավելի տրամաբանական տարբերակի՝ հին իրանական **naxu-ščaria*- ձևին, որ նշանակում է «լավագույն որսորդի ավար»¹⁵: Այնուամենայնիվ, դատելով այս էվֆեմիզմի հիմքում ընկած բառի հիմնական, առաջնային «որս, որսամիս» իմաստից, կարելի է ենթադրել, որ *vāg* բառը փոխարինվել է *neči* բառով՝ ոչ թե դրա դիվային էության նկատմամբ վախի պատճառով, այլ գուցե, ընդհակառակը, կենդանուն չվախեցնելու նպատակով՝ պայմանավորված որսորդների շրջանում հաճախ հանդիպող այն համոզմունքով, որ որսն իր անունով կոչելը վատ նշան է: *Neči* «գայլ» բառում ևս պատմական *-*r-* ձայնորդը չի պահպանվել, ինչպես *vāg* բառում:

2. *nahlati*, *mor*

Թալիշերենի Անբարանի բարբառում «օձ» հասկացությունը ևս երկու բառոյթով է արտահայտվում՝ *mor* և *nahlati*: Օձը հնդեվրոպական և մասնավորապես իրանական դիցաբանության մեջ մշտապես կարևոր դեր է խաղա-

¹³ **Хакимова М.**, Табу и эвфемизм в таджикском и английском языках, “Ученые записки Худжандского государственного университета им. Академика Б. Гафурова. Гуманитарные науки”, N1 (42), Худжанд, 2015, с. 149.

¹⁴ **Цаболов Р.**, Этимологический словарь курдского языка, том II, Москва, 2010, с. 36-37.

¹⁵ **Edelman D.**, Some taboo-words in Iranian languages of Central Asia, *Language in Time and Space* (ed. Brigitte L. M. Bauer, Georges-Jean Pinault), Berlin, 2003, p. 122.

ցել, դրան վերագրվել են զանազան գերբնական հատկանիշներ, այն համարվել է չարի մարմնացում և մշտապես պայքարի մեջ եղել բարի ուժերի դեմ¹⁶: Հրադաշտականության մեջ հիշատակվում են բազմաթիվ օձեր և օձանման հրեշներ, ինչպես Aži Dahāka (հայկական դիցաբանության մեջ՝ Աժդահակ), Aži Sruuara, Aži Raoiḏita, Aži Višāpaև այլն: Սրանց բոլորի անվանումների հիմքում ընկած է հին իրանական *aži-/aži- «օձ» արմատը, որ հանգում է հնդեվրոպական *eg^[h]- առաջնային հիմքի տարբերակներից մեկին՝ *og^[h]oi-¹⁷ (առաջնային հիմքից ծագում է նաև հայերեն «իժ» բառը¹⁸): Պայմանավորված օձի հետ կապված հավատալիքներով ու պատկերացումներով՝ լեզվաբանական տարուի հետևանքով իրանական լեզուների մեծ մասից անհետանում են հին իրանական *aži-/aži- արմատներին հանգող բառերը¹⁹: Թալիշերենում ևս այս արմատը չի պահպանվել. դրա փոխարեն գործածվող mor բառը համապատասխանում է ժամանակակից պարսկերենի mār «օձ» բառին (հմմտ. քրդ. mār, տաջ. мор, զազա mār և այլն), որը ևս փոխարինել է տաքուավորված արմատին: Դեիխոդան այս բառը համեմատում է սանսկրիտի māra «սպանող» բառի հետ՝ դրա ծագումը կապելով Ավեստայի լեզվի mairya «վնասող» բառի հետ²⁰: Պ. Շերվյոն հնարավոր է համարում բառի առաջացումը *marθra- «սպանող» ձևից՝ նշելով, որ, այնուամենայնիվ, նման եզրահանգման վերջնական լինելուն խանգարում են հնչյունական որոշ բարդություններ²¹: Քննելով թալիշերենի mor բառին քրդերենում համապատասխանող mār «օձ» բառը՝ Յաբոլովը ևս այն կապում է հին իրանական *mar- «սպանել» բայարմատի հետ²²: Թալիշերենի Անբարանի բարբառի mor բայն ամենայն հավանականությամբ փոխառություն է պարսկերենից, քանի որ բնիկ թալիշական բառերում առաջնալեզվային r ձայնորդը չի պահպանվում, ինչպես՝ ko «աշխատանք» (հմմտ. ժ. պ. kār < հին իր. *kāra), bo «բեռ» (հմմտ. ժ. պ. bār < հին իր. *bāra) և այլն:

¹⁶ Տե՛ս Գамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 527:

¹⁷ Նույն տեղում, էջ 526: Բасторгуева В., Эдельман Д., Этимологический словарь иранских языков, том 1, Москва, 2000, с. 297.

¹⁸ Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1926, էջ 238:

¹⁹ Այս արմատի հետքերը կարելի է գտնել իրանական լեզուներից միայն խորեզմերենում՝ yyz «օձ», և մունջիում՝ yiz «օձ», Edelman D., նշվ. աշխ., էջ 127:

²⁰ Dehoda A., Loṣatnāmeḥ, v. XII, Tehran, 1993-1994, p. 17592.

²¹ Skjærø P, Aždahā, <http://www.iranicaonline.org/articles/azdaha-dragon-various-kinds#pt1>.

²² Цаболов Р., Этимологический словарь курдского языка, том 1, Москва, 2001, с. 641.

«Օծ» հասկացության մյուս արտահայտչամիջոց *nahlati* բառը ևս փոխառություն է պարսկերենից: Արաբերենից փոխառյալ *la'n/la'nat* «անեծք» բառից կազմված պարսկերեն *la'nati* «անիծյալ» բառը թալիշերենի Անբարանի բարբառում ենթարկվել է դրափոխության. ո և լ ձայնորդները բառի մեջ փոխվել են իրենց դիրքերով²³, իսկ թալիշերենի հնչյունական համակարգին խորթ կոկորդային դադարը, որ արաբերենում և պարսկերենում արտահայտվում է *ʕ* (*ʕayn*) տառով, վերածվել է *h*-ի: Փաստորեն, ինքնին այլասացական ծագում ունեցող *mor* բառը, որ փոխարինում էր տաբուավորված **aži-/ʔaji-* արմատից ծագող ձևերին, լեզվի պատմական զարգացման ընթացքում այլևս չի գիտակցվում որպես այդպիսին և թալիշերենի Անբարանի բարբառում ենթարկվում է երկրորդական տաբուավորման, ինչի հետևանքով լեզվում ի հայտ է գալիս *nahlati* «օծ»՝ բառացի «անիծյալ» նշանակող այլասացությունը՝ ամենայն հավանականությամբ պայմանավորված թալիշ ժողովրդի շրջանում օծի հետ կապված զանազան սնահավատությունների առկայության հանգամանքով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է թալիշերենի Անբարանի բարբառի «գայլ» և «օծ» բառերի ստուգաբանական քննությանը: Հնդեվրոպական ավանդության մեջ գայլը և օծն ունեն հատուկ պաշտամունքային–ծիսակարգային գործառույթներ, օժտված են հատուկ սակրալ հատկանիշներով, այդ իսկ պատճառով «գայլ» և «օծ» նշանակող հնագույն բառույթներն աստիճանաբար սկսում են տաբուավորվել և փոխարինվել այլասացություններով (էվֆեմիզմ): Թալիշերենի Անբարանի բարբառում «գայլ» և «օծ» հասկացությունների համար գոյություն ունի երկու բառույթ, որոնցից մեկը տաբու է, մյուսը՝ այլասացություն:

Բանալի բառեր – թալիշերեն, իրանական լեզվաբանություն, Անբարանի բարբառ, «գայլ», «օծ», ստուգաբանություն:

²³ *La'nat* բառի դրափոխված բառը տարածված է նաև հայերենի բարբառներում՝ նալլաթ (Թբիլիսիի, Կարինի, Ուրմիայի, Համշենի, Վանի բարբառներ), նալլաթ (Թբիլիսիի, Արարատյան, Կարինի, Մուշի, Վանի, Շատախի բարբառներում), նաիլաթ, նայլաթ (Ղարաբաղի բարբառում), օրինակ՝ *նալլաթ քեզ, չա'ր սալանա, Գասպարյան Գ., Գրիգորյան Ա., Հակոբյան Ա. և ուրիշ.*, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Երևան, 2007, էջ 128:

ТАБУ И ЭВФЕМИЗМ: ЭТИМОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ СЛОВ «ВОЛК» И «ЗМЕЯ» В ЛЕКСИКЕ АНБАРАНСКОГО ДИАЛЕКТА ТАЛЫШСКОГО ЯЗЫКА

АКОП АВЧЯН

Статья посвящена этимологическому анализу слов «волк» и «змея» в диалекте Анбарана талышского языка. В индоевропейской традиции волк и змея имеют особые культово-ритуальные функции, наделены особыми священными качествами, и по этой причине древние лексемы, обозначающие понятия «волк» и «змея», постепенно стали табуироваться и заменяться эвфемизмами. В анбаранском диалекте талышского языка для слов «волк» и «змея» существуют две лексемы, одна из которых является словом-табу, другая – эвфемизмом.

Ключевые слова – талышский язык, иранское языкознание, анбаранский диалект, «волк», «змея», этимология.

TABOO AND EUPHEMISM: AN ETYMOLOGICAL ANALYSIS OF THE WORDS “WOLF” AND “SNAKE” IN ANBARAN DIALECT OF THE TALYSH LANGUAGE

HAKOB AVCHYAN

In this article Hakob Avchyan considers the etymological analysis of the words “wolf” and “snake” in Anbaran dialect of the Talysh language. In the Indo-European tradition wolves and snakes have cult and ritual charges and are endowed with attributes. This is the reason why the old lexeme meanings of “wolf” and “snake” are being tabooed and with time they are being replaced with euphemisms. There are two lexemes for the words “wolf” and “snake”, one is a taboo word, the other a euphemism in the Anbaran dialect of the Talysh language.

Key words – talysh language, Iranian linguistics, Anbaran dialect, “wolf”, “snake”, etymology.